

**ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**9-րդ դասարանի ավարտական քննության**

Ուղեցույցի նպատակն է օգնել հանրակրթական հիմնական դպրոցի 2017-2018 ուստարվա 9-րդ դասարանցիներին՝ արդյունավետ նախապատրաստվելու «Ֆիզիկա» առարկայի ավարտական քննությանը և կողմնորոշելու ուսուցիչների գործունեությունն այդ ուղղությամբ:

Քննական թեստը կազմվում է հանրակրթական հիմնական դպրոցի «Ֆիզիկա» առարկայի չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան՝ գործածվող դասագրքերի հիման վրա:

**1. Առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի**

Թեստի առաջադրանքները ներկայացված են՝ ընտրովի պատասխանով, կարճ և ընդարձակ պատասխան պահանջող և պնդումների փնջով:

Ներկայացման ձևը	Առաջադրանքի համարը	Ընդհանուր միավորը
Ընտրովի պատասխանով	1-22	22
Կարճ պատասխանով	23-26	4
Պնդումների փունջ	27	4
Ընդարձակ պատասխանով	28-32	5
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>1-32</b>	<b>35</b>

Քննության ընթացքում առաջադրանքներին պատասխանելու համար աշակերտը պետք է լրացնի պատասխանների ձևաթուղթ, որի ճիշտ լրացումից է կախված նրա քննական արդյունքը:

Ընտրովի պատասխանով առաջադրանքները կատարելիս տրված 4 պատասխանից պետք է ընտրել միակ ճիշտ պատասխանը և պատասխանների ձևաթղթի տվյալ առաջադրանքի համապատասխան վանդակում կատարել «X» գրառումը:

	1	2	3	4
1	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
2	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
3	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
4	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների (ենթաառաջադրանքների) պատասխանների գրառման համար պատասխանների ձևաթղթում նախատեսված են համապատասխան տեղեր: Յուրաքանչյուր առաջադրանքի պատասխանը (բառ, բառակապակցություն, թիվ, թվային արժեք՝ չափման միավորով) պետք է գրել պատասխանների ձևաթղթում՝ դրա համար առանձնացված տեղում (օր.՝ մագնիս, կինետիկ էներգիա, 12, 45 կգ, 21 մ/վ և այլն): **Պատասխանը պարտադիր պետք է բերված լինի միավորների ՄՀ համակարգի, եթե առաջադրանքում լրացուցիչ հրահանգ չկա:**

Պնդումների փնջի յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված «ճիշտ է» կամ «Միայն է» պատասխանի համար տրվում է մեկական միավոր: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 4 միավոր: «Չգիտեմ» պատասխանի համար միավոր չի տրվում և չի հանվում: Յուրաքանչյուր **սխալ** նշված պատասխանի համար առաջադրանքին տրվելիք միավորներից հանվում է մեկական միավոր: Եթե տրվող և հանվող միավորների քանակները հավասար են կամ հանվող միավորների քանակը գերազանցում է տրվող միավորների քանակը, ապա առաջադրանքի պատասխանը

27.		1	2	3	4
ճիշտ է:	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	
սխալ է:	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
չգիտեմ:	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

գնահատվում է 0: Այլ առաջադրանքներից վաստակած միավորներից որևէ միավոր չի հանվում:

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները կատարելու համար թեստ-գրքույկի համապատասխան տեղում պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել առաջադրանքի կատարման ողջ ընթացքը (կատարվող բոլոր քայլերի գրանցումով, պահանջվող բանաձևերով, մաթեմատիկական հաշվարկներով և պատասխանի ստացումով): Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները պետք է կատարել թեստ-գրքույկի համապատասխան տեղում (*չեն անցկացվում պատասխանների ձևաթուղթ*):

Աշակերտն ունի սխալ պատասխանն ուղղելու 4 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով, 1-ը՝ կարճ պատասխան պահանջող առաջադրանքների, 1-ը՝ պնդումների փնջի համար: Եթե անհրաժեշտ է փոխել սխալ նշված պատասխանը, ապա պատասխանների ձևաթղթի՝ սխալ նշված պատասխանները փոխելու տեղում անհրաժեշտ է նշել առաջադրանքի համարը և համապատասխան վանդակում գրառել «X» նշանը կամ գրել կարճ պատասխանը:

## 2. Առաջադրանքների բաշխումն ըստ դասընթացի բաժինների

Ստուգվում են աշակերտի գիտելիքներն ու կարողությունները ծրագրով նախատեսված բոլոր բաժիններից՝ հետևյալ մոտավոր համամասնություններով.

Հ/հ	Թեմա	Միավորներ
1	Մեխանիկական երևույթներ	16
2	Ջերմային երևույթներ	6
3	Էլեկտրամագնիսական երևույթներ	6
4	Օպտիկական երևույթներ	3
5	Ատոմային միջուկի կառուցվածքը	2
6	Աստղագիտություն	2
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>35</b>

## 3. Գրավոր աշխատանքի գնահատման չափանիշները

Առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքների՝ պատասխանների ձևաթղթում ջնջումներով կատարված *ուղղումների համար միավոր չի տրվում*:

Եթե թեստ-գրքույկում բացակայում է ընդարձակ պատասխաններով առաջադրանքների լուծման ընթացքը, ապա պատասխանների ձևաթղթում *միայն պատասխանի գրառման համար միավոր չի տրվում*:

Թեստ-գրքույկը և պատասխանների ձևաթուղթը լրացվում են **կապույտ գրիչով**, իսկ ստուգումը կատարվում է **կարմիր գրիչով**:

## 4. Աշխատանքի համար հատկացվող ժամանակը

Քննական աշխատանքի կատարման համար հատկացվում է 120 րոպե:

## 5. Ցուցումներ

- ա) Բոլոր այն առաջադրանքներում, որտեղ հատուկ վերապահում չկա, թվաբանական հաշվարկները հեշտացնելու և պատասխանների միարժեքությունն ապահովելու նպատակով, պետք է ընդունել. ; ;  $\sqrt{\quad}$   $\sqrt{\quad}$  7, իսկ 10 Ն/կգ:
- բ) Պնդումների փնջի նմուշ-օրինակ.

27

**Ապակե ձողը շփում են մետաքսով: Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:**

- 1) Շփելիս էլեկտրականանում է միայն ապակե ձողը:
- 2) Շփման հետևանքով էլեկտրոններն ապակուց անցնում են մետաքսին:
- 3) Շփման հետևանքով ապակու և մետաքսի վրա ի հայտ եկած լիցքերի հանրահաշվական գումարը զրո է:
- 4) Ապակու և մետաքսի վրա առաջացած լիցքերի հարաբերությունը -1 է:

